




## Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների  
թեկնածու, հնագետ)

# ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

  
աղմոսավանքի հուշարձանների խումբը, որը պատկանում է հայ արվեստի և ճարտարապետության արժեքավոր կոթողների թվին, գտնվում է Սովետական Հայաստանի Աշտարակի շրջանի Սաղմոսավան գյուղի արևելյան եղրին, պատմական Հայաստանի Արարատյան նահանգի Արագածոտն գավառի ամենաարելյան ծայրին, Քասախի գետի աջ ձորափին, գեղատեսիլ վայրում։ Արևելյան կողմից Արայի լեռն է, արևմուտքից՝ Արագած սարը, իսկ առջևում՝ Քասախի անդնդախոր ձորը՝ իր գահավեմ, արձաթափալ շրերով։

Թե ե՞րբ է հիմնադրվել այդ նշանավոր մենաստանը, ստույգ հայտնի չէ։ Ազգային ավանդությունն ասում է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը Արագած լեռան վրա ճգնելիս երբեմն իջնում էր Քասախի գետի մոտ, մերթ բնակվելով ներքեսում՝ ձորում, մերթ վերևում՝ ձորակի ներքում։ Եղ այդ երկու տեղերումն էլ նա կառուցում է երկու փոքր եկեղեցիներ, մեկը ձորում կուսավորչի անապատ անունով, իսկ մյուսը վերևում՝ ձորակի ներքում։ Առովհետև այդ վերջինում մշտապես պարապում էին սաղմոսերգությամբ, այն կոչեց Սաղմոսաց անապատ։

Չնայած կատարված հնագիտական հետազոտությունները տեղում չեն հայտնաբերել նյութական մշակույթի հնագույն մնացորդներ, որոնք հավաստեին այդ ավանդության պատմական իրողությունը, սակայն բացառ-


ված չէ, որ այդտեղ գոյություն ունեցած լինի հնագույն կառուցվածք, որի վրա հիմնադրվել է ներկայի վանքը։ Ժդ դարում, երբ Զաքարի սպասալարի ղեկավարությամբ սեւզուկներից աղատագրվում է Արևելյան Հայաստանը, Արագածոտն գավառի մեծ մասը տրվում է Վաշուտյան իշխաններին՝ որպէս ժառանգական սեփականություն։

Վաշուտյանները ժառանգելով Արագածոտն գավառը, մեծ չափով զարկ են տալիս հայ արվեստի և մշակույթի պահպանմանն ու զարգացմանը իրենց այդ նոր հայրենիքում։ Նրանց միջոցով են հիմնադրվում և ընդարձակվում նորանոր կառուցվածքներով այնպիսի հիանալի ու հոյակապ հուշարձաններ, ինչպիսիք են Հովհաննու վանքը, Տեղերու վանքը և ուրիշներ։ Դրան զուգընթաց, Վաշուտյանները ժդ դարի սկզբներին հիմնովին վերակառուցում են նաև Սաղմոսավանքը։

Պատմական աղբյուրները մինչ ժե դարը (բացառությամբ Կիրակոս վարդապետ Գանձակեցու պատմության) ոչ մի հիշատակություն չեն պարունակում Սաղմոսավանքի մասին։ Ուշ ժամանակի պատմական աղբյուրներում էլ Սաղմոսավանքի մասին եղած տեղեկությունները շատ սահմանափակ են և աղոտ։ Սաղմոսավանքի այդ շրջանի պատմության վերաբերյալ նյութ են ծառայում որոշ ձեռագրերի հիշատակարաններ և վանքի վրա փորագրված արձանագրությունները։

Ալսպես, օրինակ, Գեորգ Լամբրոնացու  
կամ Սկեռացու կողմից 1267 թվականին  
գրված մի ձեռագրի հիշատակարանում  
նշվում է, որ Նրա առաջին գրքի ավարտու-  
մը տեղի է ունեցել Սաղմոսավանքում.  
«Ի ձեռն տարաշխարհիկ պատանոյ ումեմն  
թարմատար գրչի, ի Կիդիկեան նահանգէն,

դեմ մատեանս աստուածալին, ստուգա-  
բանեալ ի բուն արինակաց: Նա և այլ յոլով  
գիրս աստուածաշունչ գրեալ եմ, ի լուսաւ-  
րութիւն մանկանց եկեղեցոյ, և բարեխաւ  
առ Քրիստոս, վասն փրկութեան ուսոյ մե-  
րոց...»<sup>2</sup>:



ՍԱՌԱՋՈՒՍՏՎԱՆՔԸ ԴԻՏՎԱՄ ՀԱՐԱՎԻՑ

յանմատիկի ամրոցէն Ղամբրաւն կոչեցեալ...  
ժամանակ ինչ արարաք յանուանեալ Սաղմո-  
սավանք, ուր և զառաջինն աւարտեցաք հա-  
տող սոսու մատիկին:

Դրանից հետո, մինչև ժՊ դարի քսանական թվականները ոչ մի հիշատակություն չկա Սաղմոսավանքի մասին։ 1320 թվականին գրած մի ձեռագիր հիշատակարանը հավաստում է, որ այն նույնպես գրված է Սաղմոսավանքում։ ահա այդ հիշատակարանը, որից գրեցաւ սայ ձեռամբ թարմատար և վառանգոլ ու Դոկ կածն Աստվածատրոյ անսուս կրանաւորի, ի թվ. Հայոց ԶԿԹ (1320), ի սուրբ քաւարանիս, որ Անապատ կոչի և վանք Սաղմոսի, և է Աստուծով, որոց աղաւիք սոցա աւժանդակել գրեցի զուազար-

1 Հ. Դ. Ալիշան, «Այրարատ, բնաշխարհ Հայաստանուց», Վանեակի, 1890 թ., է, 161:

Այնուհետև, շուրջ մեկ դար, ոչ մի տեղեւ կություն չկա Սահմասավանքի մասին:

Սաղմոսավանքի մասին հաջորդ տեղեկությունը պարունակվում է մի ձեռագիր հիշատակաբանում, որը կոչվում է ԱԱռ որս գիրք Գրիգորի Աստուածաբանի, գրված Սալմոսավանքում 1413 թվականին, սկզբի մասը շափածո ձևով.

«...Այլ և զմեղօք մեռեալ որդի  
Մկրտի, Եղեացահ,

#### Սուսանուն կազմութեանի.

### **Առնեք լիշտան սիս առժանի**

**Եւ ձեզ լիցի մասն ի բարի**

Եւ ձեր ամէն յանցանք քաւի,

**Զմեղ յիշեցէք ի յաղաւթիւն**

Ա. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեւ

Հ Ա. Խաչիկյան, «ԺԴ գարի հայերեն ձևուագրելի  
հիշատակարաններ», Սրբան, 1950 թ., էջ 163—164,

ի թուականիս Հայոց Պկբ (1413), գրեցաւ լուծմունքս ի սուրբ մենաստանիս Սաղմոսի Եւ ետու զգիրքս լիշտակ հոգոյ իմոյ հոգմոր եղաւը իմոյ Թովմա վարդապետի աստուածարնակ ուստի մուստին Մեծոփայ վանացն, վասն զի նա զառ որս գիրս Աստուածարանին ինձ և ազգականին իմոյ Մարգարէ վարդապետին՝ ինքնագիր ձեռաւք գրեալ շնորհեաց մեղք<sup>3</sup>:

Այդ նույն ժամանակ Սաղմոսավանը առաջնորդ է հիշվում Հակոր վարդապետը, որի մասին Թովմա Մեծոփեցին գրում է. «Մեծն Յակոր գնաց յերկիրն Արարատեան,

նում է. «Եւ այս էր ի թուականիս մեր 868 (1419) ամի նուկ յետ ամի միոյ եկեալը աշակերտք նոցա կացին ժամանակս ինչ և զաղտագողի առեալ գնացին ի զաւառն Արարատեան առ մեծ վարդապետն Յակոր Սաղմոսավանից՝ հոգմոր հարազատն իւրաց:

Ապա Սաղմոսավանքի մասին հիշատակվում է մի ձեռագիր Մաշտոցի հիշատակարանում, գրված 1436 թվականին, որը մեջ ենք բերում որոշ կրթատումներով. «...[Գրեցաւ] ձեռամբ սրբաւր կրանաւրի և կուսակրան քահանայի Կարապետ գրշի, յԱյրարատեան զաւառի, ի յերկնահանգէտ և ի գի-



ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԸ ԴԻՏՎԱԾ ՀԱՐԱՎ.-ԱՐԵՎԱՆՈՒԹԵՅՑ

և բնակութիւն իւր արարեալ զսուրբ ուխտն Սաղմոսավանից, որ 20 ամ աշակերտեալ է»<sup>4</sup> Յովհաննու Որոտնեցոյց<sup>5</sup>:

Այնուհետև Թովմա Մեծոփեցին, պատմելով իր և մի խումբ վարդապետների մասին, որոնք աշակերտում էին Յովհաննոս Մեծոփեցուն, Սաղմոսավանքի մասին տեղեկաց-

<sup>3</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, Երևան, 1955 թ., էջ 144:

<sup>4</sup> «Փատմոթին Հանկ-Թամուրայ և յաջորդաց իրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցոյց», Փարիզ, 1860 թ., էջ 33:

րահոչակ ուխտն Սաղմոսավանից... ի թվ. ՊԶԵ (1436), ի բռնակալութեան Սքանդարի... Յովհաննէս վարդապետ փակակալ Սահնոյ՝ ստացող...»<sup>6</sup>:

ԺԵ դարի երկրորդ կեսը և ամբողջ ԺԵ դարը Սաղմոսավանքի մասին տեղեկություններ իսպառ բացակայում են: Թի ինչ դրության մեջ է եղել Սաղմոսավանքը այդ մեկ ու կես դարի ընթացքում, հայտնի չէ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>6</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, էջ 465:

Ժէ դարի սկզբներին Սաղմոսավանքի առաջնորդ է Հիշվում Սարգիս եպիսկոպոսը: Սրա առաջնորդության ժամանակ՝ Գրիգոր Վարդապետ Կամախեցին, Բու մականոնով, 1603 թվականին գրած մի ձեռագրի հիշատակարանում նշում է, որ «Յայսմ ամի եկի... զետեղեցա անդ ի սոսապարդ և ամենագովական և անապատ Սաղմոսաց, բնակելով վանս և անապատ Սաղմոսաց, բնակելով ամս երիս, և հաճեցա անդ բնակութին առնել...»<sup>9</sup>:

Սաղմոսավանքի մասին Ժէ դարի սկզբների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է հաջորդում Առաքել Վարդապետ Դավիթիթեցին:<sup>10</sup> Խոսելով Սաղմոսավանքի առաջնորդ, վերը հիշատակված Սարգիս եպիսկոպոսի մասին, Դավիթիթեցին տեղեկացնում է, որ նա Ամբերդ կամ Արագածոտն գալաւոր՝ Արենի գյուղից էր Վերշինս գտնըվում էր Կարբի գյուղին մոտիկ (Հնագիտական հետազոտությունների շնորհիլ Հնարավոր է եղել որոշակի ճշտել դրա տեղը):

Թողնելով վանքի առաջնորդությունը, Սարգիս վարդապետ Կամախեցին ուղևորվում է Երուսաղեմից, որտեղ նրան է հանդիպում Կիրակոս Տրապիզոնցին: Վերադառնալով Երուսաղեմ, նրանք Արեւլյան Հայաստանում հիմնում են մի շարք անապատներ՝ Հարանց անապատը, Եփուհայրի կուսանաց անապատը, Հալիճորի անապատը և ուրիշներ: Միաժամանակ մի շարք վանքեր վեր են ածում անապատի: Այդ բոլորից հետո վերադառնում են Սաղմոսավանք և վերջինս նույնպես վերածում անապատի: Այս համատեղ շանքերով նրանք մշակում են վանական, անապատական ժամասացության կարգը՝ առավոտյան, ճաշու և երեկոյան: Հաստատում են անապատականների հագուստի հատուկ ձև և սահմանում նոր կանոններ վանական կյանքի: Սարգիս եպիսկոպոսը վախճանվում է 1610 թվականին:

Այդ նույն ժամանակի վերաբերյալ Սաղմոսավանքի մասին հետաքրքիր են նաև ժամանակադիր Գրիգոր Դարանաղեցու վկայությունները: Ինչպես պարզվում է այդ վկայություններից, Դարանաղեցին Սաղմոսավանք է կեկել 1600 թվականին, իր Արարատյան նահանգը գտնվում էր Թուրքիի տիրապետության տակ և մնում է այնտեղ մինչև 1603 թվականը, երբ այն գրավում են պարսիկները: Այդ ժամանակից նա թողնում է Սաղմոսավանքը և վերադառնում իր հայրենի երկիրը՝ Խաղոտիք. «Յորժամ գնացաք

7 Հ. Դ. Ալիշան, «Այրաբատ», էջ 164:

8 «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւիթիթեցույ», Վազարշապատ, 1834 թ., էջ 189—198:

մեք ի Խախտեաց երկրէն ի յԱրարատեան գաւառին և բնակութիւն արարաք անդ ի վանս լուսազարդ Սաղմոսավանսն և նորին ամենագովական անապատին և կացաք երիս ժամանակս»<sup>9</sup>:

Ապա նկարագրելով սուլթան Մուրադի ժամանակ թուրքական զորքերի «Երևանայ փոսին վրայ» 1602 թվականին կատարած արշավանքների հանգամանքները, Դարասղեցին ավելացնում է, որ ինքը այդ ժամանակ գտնվում էր «ի վանս մեծահոչակ ուխտին Սաղմոսաց ի լուսազարդ անապատին»<sup>10</sup>:

Այնուհետև Դարանաղեցին տեղեկացնում է, որ Մովսես Սյունեցի (Տաթևացի) վարդապետը (հետո կաթողիկոս), 1606 թվականին պարսից Ապաղա-Խան շահից թուրքական զամանակություն ստանալով էջմիածնում բնակելու համար, նաիս գալիս է Երևան և ստանալով Ամիրգոմե-Խան սարդարի համաձայնությունը, հիմնական բնակություն է հաստատում էջմիածնում, որի ընթացքում ձեռնամուկ է լինում էջմիածնի վանքի ընդհանուր վերանորոգմանը: Այդ ժամանակամիջոցում նա այցելում է Հովհաննավանք և Սաղմոսավանք: Այդ մասին հետեւյալ կերպ է պատմում Դարանաղեցին. «Եւ գնացեալ ի Սաղմոսավանսն և Ցովհաննավանսն, որ հրաշալիք և հոչակատրք են ի մէջ ամենայն վանորէիցն, զնոսա կամեցա զդպատուս անել և կարգել մանկունս ուշիմս ի դպրաց, որպէս յետոյ կատարեաց իսկ արդեամբք»<sup>11</sup>:

Այդ նույն Դարանաղեցու կողմից 1606 թվականին Երուսաղեմում գրված մի Աստվածաշնչի հիշատակարանում, ի թիվս այլ հոչակավոր կրօնական գործիչների, հիշատակվում է նաև «և համշիրաք եղբօր մերոյ կամաւոր աղքատին Տէր Սարգիս եպիսկոպոսին Սաղմոսավանեցին»<sup>12</sup>: Դարանաղեցու այդ տեղեկությունից պարզվում է, որ այդ ժամանակ վերը հիշատակված Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը, ինչպես և նրա ընկերակից Կիրակոս Տրապիզոնցին գտնվելիս են եղել Երուսաղեմում:

Ժէ դարի երեսնական թվականներին Սաղմոսավանքի առաջնորդ է Հիշվում Մանվել արքեպիսկոպոսը, որը արտագործ է տալիս 1247 թվականին Կիլիկիայում գրված «Թուղթ Պօղոսի» գիրքը:

9 «Ժամանակագրության Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղեցոյ», Երուսաղեմ, 1915 թ., էջ 283:

10 Նույն տեղում, էջ 37:

11 Նույն տեղում, էջ 295—296:

12 Նույն տեղում, էջ 602.

Նույն դարի կեսերին Սաղմոսավանքի առաջնորդ է հիշվում Հովհաննես եպիսկոպոսը: Զաքարիա Սարկավագ պատմիլը տեղեկացնում է, որ այդ Հովհաննես եպիսկոպոսը նախ լինում է Հովհաննավանքի առաջնորդ, ապա կամովին թողնում է այն և գալիս Սաղմոսավանք, վերահաստատում է վանքը՝ հավաքելով քառասունի շափ կրոնավորներ: Իսկ Հակոբ Զուլայեցի կաթողիկոսը նրան է հանձնում վանքի առաջնորդությունը. «Եւ յետ երկուց ամաց կամա իրով հրաժարեցաւ ի վանացն. և գնաց յանապատն Սաղմոսավանից. և նորոգեաց զնա, և ամենայն կարգ և կանոնք հաստատեաց: Եւ ժողովեցան անդ միաբանք աւելի քան զի: Իսկ կաթողիկոսն Յակովը յանձնեաց ի նա և զառաջնորդութիւնն Սաղմոսավանից, զի անապատին և վանքին տիրեսցէ»<sup>13</sup>:

Զաքարիա պատմից վերը մեջ բերված տեղեկություններից միանգամայն պարզ է դառնում, որ մինչև Հովհաննես եպիսկոպոսի Սաղմոսավանք գալը, վերջինս գտնվելիս է եղել լքված ու ամայացած վիճակում և, որ Հովհաննես եպիսկոպոսը վերահաստատում է շնացնում է այն:

Զաքարիա Սարկավագ պատմիչի վկայությամբ, Հովհաննես եպիսկոպոսը կամովին հրաժարվում է Սաղմոսավանքի առաջնորդությունից, հանձնելով այն իր եղբորորդի Գաբրիել վարդապետին: Հենց այդ ժամանակ է, որ Հովհաննես եպիսկոպոսի մոտ, Սաղմոսավանք են գալիս Շատիվանք անապատի մի խումբ կրոնավորներ, ինդրելով, որ նա զնա Շատիվանք և սովորեցնի իրենց անապատական նոր կյանքի կարգն ու ձևերը: «Եւ եկին մուղեսիք յեղենաձորոյ ի Շատիկ անապատէն, աղաչէին և ասէին, մեք ոչ գիտեմք զկարգ և սահմանք անապատի, ոու եկ և կարգաւորեաց զմել: Եւ ըստ աղաշանաց նոցա ելաւ գնաց, և ըստ կարգի անապատի կարգաւորեաց զնոսա ուղղութեամբ և ամենայն բարեձեւութեամբ»<sup>14</sup>:

Վերադառնալով Շատիվանքի անապատից, Հովհաննես եպիսկոպոսը առժամանակ մնում է Սաղմոսավանքում, ապա իշնում է Քասախ գետի ծորը, Լուսավորչի անապատը և այնտեղ էլ վախճանվում 1657 թվականին: Գաբրիել վարդապետը ապա Սաղմոսավանք է բերում նրա մարմինը և ամփոփում Ս. Աստվածածինը եկեղեցում. «Եւ եղ յԱստուածածնի եկեղեցին ի հիւսիսոյ կողմն: ...Բայց մահն նորա եղ ի թուին ՈւծԶ»<sup>15</sup>:

<sup>13</sup> Զաքարիա Սարկավագ, «Պատմութիւն», թ, Վաղարշապատ, 1870 թ., էջ 49.

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 49—50.

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 50:

Հովհաննես եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ և դրանից հետո մինչև Ժարի քառասունական թվականները Սաղմոսավանքը գտնվելիս է եղել առավել զարգացած ու բարգավաճ վիճակում: Սիմեոն կաթողիկոս երևանցու վկայությամբ<sup>16</sup>, Սաղմոսավանքը հանդիսանում էր եպիսկոպոսանիստ վայր իր առանձին վիճակով, որի մեջ մտնում էին նիդ զավառի մեծագույն մասը, մի քանի գյուղեր Արագածոտն գավառից և որոց գյուղեր էլ Գեղարքունիք գավառից: Ուներ բաղմաթիվ հասութաբեր գյուղեր, մեծ քանակությամբ վարելանող, խոտհարքեր, խաղողի և մրգատու ծառերի այգիներ, ձիթհաններ, ջրաղացներ, բնակելի տներ, մառաններ և այլ ունեցվածքներ:

Զաքարիա Սարկավագը նույնպես տեղեկացնում է, որ նիդ գավառը մտնում էր Սաղմոսավանքի վիճակի մեջ. «Եւ գաւառն նիդ էր ընդ իշխանութեամբ Սաղմոսավանից»<sup>17</sup>: Սաղմոսավանքի վանահայր, վերոհիշյալ Հովհաննես եպիսկոպոսի ժամանակ հիշվում է Թովմա վարդապետ Վանանդեցին, որը շափածո ներբողներ է գրել հայոց վանքերի մասին: Այդ ներբողներից մեկը նա նվիրել է Սաղմոսավանքին:

Այսուհետեւ Սաղմոսավանքի առաջնորդ և հիշվում Ուսկան վարդապետ երևանցին 1661 թվականին, Գաբրիել վարդապետը 1669 թվականին: Զաքարիա Ագուեցի մատենագիրն էլ տեղեկացնում է, որ ինքը 1672 թվականին, Հովհիս ամսի 13-ին, կիրակի օրը՝ Վարդապառի տոնին այցելել. է Սաղմոսավանքին:<sup>18</sup>

1707 թվականին Սաղմոսավանքի առաջնորդ է հիշվում Հովսեփի վարդապետը:

Արքահամ կաթողիկոս Կրետացին 1734 թվականին այցելել է Սաղմոսավանք<sup>19</sup>, Դրանից երկու տարի հետո, 1736 թվականին, Սաղմոսավանքի առաջնորդ է հիշվում Ավետիքի վարդապետը:

1736 թվականից հետո ոչ մի տեղեկություն չի պահպանվել Սաղմոսավանքի մասին: Ենթադրվում է, որ պարսից Թահմազ-Ղուլի շահի արշավանքների հետևանքով քայլայված ու ամայացած լինի նաև այդ մենաստանը:

<sup>16</sup> Սիմեոն կաթողիկոս երևանցի, «Գամբռ», Վաղարշապատ, 1873 թ., էջ 288—291:

<sup>17</sup> Զաքարիա Սարկավագ, նույն տեղում, էջ 49:

<sup>18</sup> «Զաքարիա Ագուեցու օրագրությունը», Երևան, 1938 թ., էջ 108:

<sup>19</sup> «Արքահամ կաթողիկոսի Կրետացոյ, Պատմութիւն անցից իրոյ և նադիր-Եահին պարսից», Վաղարշապատ, 1870 թ.:

Դրանից շուրջ մի դար հետո Հովհաննես եպիսկոպոս Եահիսթոնյանցը հետևալ ձեռքի է նկարագրում Սաղմոսավանքի դրությունը. «...Այլ շնչք նոցա խախտեալ՝ և յինչ ինչ տեղեաց որմոց տանեացն անկեալ են քարինք, և լքեալ կայ ի պահանութենէ ուրանօր բնակին այժմ յազգէ հայոց տունք 4, և աղօթատեղի է նոցա այդ եկեղեցի. և ի մահմեղականաց՝ տունք 6...: Կացարանք հոգմորական ուխտի վանացս իսպառ անհետացեալ՝ մինչև չնշմարիլ և տեղույ այնց»<sup>20</sup>:

Սաղմոսավանքը եղել է Արևելյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոններից մեկը. Կիրակոս Գանձակեցի պատմիլը այս դասում է Հայաստանի գլխավոր վանքերի շարքը. «...Եւ գլխաւոր վանորայքն՝ Սանահին և Գետիկ և Հաղարծին... և Յովհաննու վանք և Սաղմոսաց վանք...»<sup>21</sup>: Գրիգոր Գարանաղեցին էլ վկայում է, որ Սաղմոսավանքը և Յովհաննավանքը «հրաշալիք և հոչակաւորք են ի մէջ ամենայն վանորէիցնցն»<sup>22</sup>, իսկ մատենագրական այլ աղբյուրներում այն կոչվում է «երկնահանգտ-գերանչուակ ուխտ», «լուսազարդ վանք-անապատ», «ամենագովանապատ», «մեծահուակ վանք-ուխտ» անուններով:

Պատմական աղբյուրներում հիշատակություն շկա այն մասին, թե Սաղմոսավան-

քում գոյություն ունեցել է հատուկ դպրոց. սակայն վերը մեջ բերված ձեռագրերի հիշատականները, ինչպես և հատուկ գրատան շենքի գոյությունը վանքում վկայում են, որ այնտեղ շատ հարգի է եղել ոչ միայն գրչագրությունը, այլև մատենահավաքման գործը, որ գլխավորն է, այդ մատյան-գրքերը եղել են ամենալավագնութիւն օրինակները: Դրան որպես ապացուց կարող է ծառայել այն, որ Ժէ դարի վերցերին երուաղեմի Մինաս պատրիարքը ցանկանալով հրատարակել «Նարեկ» աղոթագիրքը, խնդրում և ստանում է Սաղմոսավանքում եղած ընտիր օրինակը<sup>23</sup>:

Այդ աշխատանքները հատկապես մեծ թափ ու ծավալ են ստացել այնպիսի ուսայլ կրոնավորների առաջնորդության ժամանակ. ինչպիսիք են բարունապետ Հակոբ վարդապետը, որը շուրջ 20 տարի աշակերտել է Հովհանն Որոտնեցուն, որի մասին տեղեկացնում է Թովմա Մեծոփեցի պատմիլը, և Սարգիս ու Հովհաննես եպիսկոպոսները: Գուցեղա է եղել հիմնական պատճառը, որ Մովսես Սլունեցի կաթողիկոսը հարկագրված է լինում հատուկ գպրատուն բացելու Սաղմոսավանքում, ինչպես այդ մասին նշեցինք վերմում:

### Բ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը հարուստ է ամեն տեսակի նյութական մշակույթի հուշարձաններով: Հայ ժողովուրդը թողել է բազմահարուստ ժառանգություն, որը սակայն մեզ է հասել մեծ մասամբ ավերված, քայլարված ու անխնամ վիճակում: Սակավաթիվ են այն հուշարձանները, որոնք համեմատաբար լավ են պահպանվել: Արդպիսիների թվին է պատկանում նաև Սաղմոսավանքի հուշարձանների խումբը: Վերջինս բաղկացած է երկու եկեղեցուց, գավթից, գրատնից, պարսպապատ է, կից տարածվում է ընդունակ գերեզմանատուն՝ մահարձաններով և միաբանության բնակելի շենքերի մնացորդներով:

1. Ս. Սիոն եկեղեցի.— Վանքի գլխավոր եկեղեցին է: Ինչպես ցույց է տալիս մուտքի ճակատակալ քարի վրա փորագրված արձանագրությունը (արձանագրություն Ա), եկե-

<sup>20</sup> Հովհաննես հպիսկոպոս Շահիարունյանց, «Ստորագրութիւն Կաթողիկէ էքմիածնի և հինգ գաւառացն Արարատայք», Բ, էջմիածնին, 1842 թ., էջ 122, 124:

<sup>21</sup> Եկեղեցու վարդապետի Գանձակեցու Համառոտ պատմութիւն», Վենեսակի, 1865 թ., էջ 174:

<sup>22</sup> Գրիգոր Դարանաղեցի, էջ 296:

ղեցին կառուցել է Սարգսի որդի Վաշէ իշխանը 1215 թվականին:

Եկեղեցու շենքը գմբեթավոր մի կառուցվածք է, որի հատակագիծը արտաքուստ ուղղի քառանկյունի է, իսկ ներսից, շնորհիվ անկյուններում տեղավորված խորանների, դարձել է խաչաձև՝ ուղղանկյուն խաչթեկրով:

Խաչթեկրի միացման անկյուններից ձգվում են կիսասյուներ՝ գլանաձև բներով և գծավոր զարդեր ունեցող խոյակներով ու խարիսխներով: Որոնք միանալով կամարներով, իրենց վրա են կրում գմբեթը՝ կոր թմբուկով և սրածայր վեղարով, որը հիմքին փոխանցվում է առագաստների միջոցով:

Արևելյան կողմից ունի կիսակլոր արսիդ՝ բեմով: Խորանները երկհարկանի են, բուլորն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքրիկ արսիդներ: Արևելյան կողմի խորանների մուտքերը բացվում են դեպի արևմտք՝ հյուսիսային և հարավային խաչթեկրի մեջ, իսկ արևմտյան կողմի խորանների մուտքերը բացվում են արևմտյան խաչթեկրի մեջ՝ իրար դիմաց: Դեպի վերի խորանները բարձրանում են ստորին խո-

<sup>23</sup> Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 163:

րանների պատերին կից ձգվող հնգաստի-  
ճան քարե սանդուղքներով:

Արևմտյան կողմի կիսասյուները միաց-  
նող պարագոտու ժայրերը հասնում են հյու-  
սիսային, հարավային և արևմտյան պատե-  
րին, իսկ արևելյան կողմի կիսասյուների  
պարագոտու ժայրերը՝ հարավային և հյու-  
սիսային պատերին՝ եղբեռով արսիդը:

Պատերի մեջ, արտաքուստ, կան եռան-  
կյունածն փոքր խորշեր՝ կամարածե գա-  
դաթներով:


Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կի-  
սակլոր ճակատակալ մեծ քարով ու գեղե-  
ցիկ պարականով, որը բացվում է գավթի  
մեջ: Ունի 18 լուսամուտներ, որոնցից մե-  
կական հատ բացվում են յուրաքանչյուր  
ճակատից, դրանց համապատասխան մե-  
կական հատ էլ բացվում են գմբեթի թղմ-  
բուկի շորս կողմերից, շորս հատ արևելյան  
խորանների արևելյան պատերից, երկուա-  
կան հատ արևմտյան խորանների արտա-  
քին պատերից և մեկական շատ փոքր պա-  
տոհաններ էլ արևմտյան վերին խորաննե-  
րի արևելյան պատերից:

Ամբողջ շենքը կառուցված է սև տուֆի  
սրբատաշ քարերով՝ կրաշաղախով մածոց-  
ված: Սալահատակաված է, տանիքը պատած  
է սալաքարերով: Կանգում և ամբողջական  
վիճակում է: Նկատվում են վերանորոգում-  
ների հետքեր:

2. Գավիթը. — Գտնվում է Ս. Սիոն եկեղե-  
ցու արևմտյան կողմում՝ նրան կից: Կա-  
ռուցել է նույն Վաշէ իշխանը ժդ դարի ա-  
ռաջին քառորդում: Սա, համարյա, քառա-  
կուի հատակագիծ ունեցող մի կառուց-  
վածք է: Ներսում շորս ամբողջական քարե  
սյուները և յուրաքանչյուր պատին կից  
ձգվող երկուական կիսասյուները միանա-  
լով կամարներով կազմում են թաղակապ  
ծածկը՝ կենտրոնում հատուկ լուսանցքով՝  
երդիկով: Վերջինիս վրա որպես ծածկույթ  
կառուցված է սյունազարդ փոքրիկ գմբեթ:

Թե՛ սյուների և թե՛ կիսասյուների բները,  
խարիսխներն ու խոյակները, սովորական  
պես, ամբողջական քարերից են, ըստ որի  
հյուսիս-արևելյան սյան բունը ութակող է,  
իսկ մյուս սյուների բները գլանածե: Հա-  
ռավային և հյուսիսային պատերին կից  
ձգվող կիսասյուների բները հնգակող են,  
իսկ մյուս պատերին կից ձգվող կիսասյու-  
ների բները գլանածե, ըստ որի արևելյան  
պատի կիսասյուների բները փնջածե են՝  
կազմված շորսական գլանից:


Սյուների և կիսասյուների խարիսխներն  
ու խոյակները նույնպես տարրեր ձևերով են  
մշակված և զարդարված են զանազան ձևե-  
րի քանդակներով:



ՍԱՐՄՈՍԱՎԱՆՔԻ ԳԱՎԹԻ ՆԵՐԸԸ

Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է՝  
գեղաքանդակ շրջանակով, ուր բնորոշ են  
հնգաթե ու բառաթե աստղերի և խաչածե  
զարդաքանդակները՝ մողախկ ձևով դասա-  
վորված: Մի ուրիշ մուտք էլ բացվում է Ս.  
Աստվածածին եկեղեցու սրահի մեջ: Մի եր-  
րորդ մուտք էլ բացվում է հարավային կող-  
մից՝ պատի արևմտյան ծայրից: Մի ուրիշ  
մուտք էլ եղել է արևելյան կողմից՝ պատի  
հյուսիսային ծայրից, Ս. Սիոն եկեղեցու  
հյուսիսային պատին կից, որը շարված,  
փակված է: Եկեղեցու պատի այդ մասում և  
գավթի պատի վրա պահպանված կրաշա-  
ղախի մնացորդները համոզիլ կերպով ցուց  
են տալիս, որ գավթի արևելյան կողմում,  
արևելյան պատի արտաքին կողմում, Ս.  
Սիոն եկեղեցու հյուսիսային պատի արև-  
մտյան ծայրին կից գոյություն է ունեցել  
երկհարկանի խորան, ուստի այդ շարված  
մուտքը անկասկած ստորին հարկի խորա-  
նի մուտքը պետք է եղած լինի:

Գավթի հարավային պատի մեջ եղել են  
երկու կամարակապ բացվածքներ, որոնք  
իրարից բաժանված են եղել միջնասյունով:  
Հետագայում դրանց կողերից շարելով  
դարձել են երկու՝ կամարակապ գագաթով



ՍԱՂՄՈՍՍՎԱՆՔԻ ԳԱՎԹԻ ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔԸ

լուսամուտներ: Նման մի կամարակապ գագաթով լուսամուտ էլ բացվում է հյուսիսային պատի մեջ:

Գավթի ներսում, արևելյան պատին կից, Ս. Սիռո եկեղեցու մուտքի հարավային կողմում կանգնեցված է գեղաքանդակ մի խաչքար, պատերի վրա քանդակված են բազմաթիվ խաչեր: Առանձնապես հետաքրքրիր են տանիքի կենտրոնում եղած լուսանցքի՝ երդիկի ներսի զարդաքանդակները՝ եռանկյունաձև, խաչաձև, գծավորգուկանման, ծաղկեհյուս և այլ ձևերով, որոնք մշակված են վերին աստիճանի նուրբ ձևով:

Ամբողջ շենքը կառուցված է սև տուփի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով մածուցված: Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով, նկատելի են վերանորոգումների հետքեր: Վերջին անգամ վերանորոգվել է Խրիմյան Հայրիկի կողմից 1890 թվականին, որի ժամանակ հարավային պատի կամարակապ բացվածքները վեր են ածվել լուսամուտների, դեպի հարավ բացվող մուտքի համար կառուցվել է հատուկ պորտիկ և կարավորվել են տանիքի խախտված սալաքարերոր:

3. Ս. Աստվածածին եկեղեցի: — Գտնվում է Ս. Սիռո եկեղեցու հարավային կողմուա:

Կառուցել է Վաչե իշխանի որդի Քուրդ իշխանը 1235 թվականին: Եկեղեցու շենքը փոքր է, միանավ բազիլիկ ձևով, ծածկը թաղակապ է, արևելյան կողմից ունի կիսակլոր արսիդ՝ բեմով: Միակ մուտքն արևմբույսն կողմից է, որը բացվում է փոքրիկ սրահի մեջ: Այդ սրահի մեջ հյուսիսային պատի տակ է թաղված վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը, որի մասին խոսվեց վերևում: Շարված է սև տուփի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով: Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով:

4. Գրատուն: — գտնվում է հուշարձանների խմբի հարավային կողմում: Համաձայն շենքի ներսում, հարավային պատի վրա փորագրված արձանագրության (արձանագրության ԺԲ) գրատունը կառուցել է Վաշեի որդի Քուրդ իշխանը՝ իր կնոջ՝ Խորիշահի հետ 1255 թվականին:

Գրատուն հատակագիծը, ընդհանուր առամբ, ուղիղ քառանկյունի է. ներսում հարավային և արևմտյան պատերին կից ձրգվող երկուական, հյուսիսային պատին կից, արևելյան արսիդի եզրերից և Ս. Աստվածածին եկեղեցու սրահի հյուսիսային պատին կից ձգվող՝ մեկական որմասյուները



ՍԱՂՄՈՍՍՎԱՆՔԻ ԳՐԱՏՈՒՆ ԱԲՍԻՆԻ

միանալով խաշածևող կամարներով, կաղմում են թաղակապ ծածկը, կենտրոնում հատուկ լուսանցքով՝ երդիկի ձևով: Վերջինիս վրա որպես ծածկույթ կառուցված է սյունազարդ-ոստոնտաճռ փոքրիկ զմբկի: Բոլոր կիսասյուներն ել ունեն գլանածերներ և քանդակազարդ խարիսխներ ու խոյակներ: Հարավային մի կիսասյան խոյակի վրա քանդակված է կեռ խաչի նշան՝ ներկված կարմիր ու սպիտակ գույնի ներկրութ:

Արևելյան կողմում ունի կիսակլոր արսիդ՝ բարձր բեմով՝ եկեղեցիների նմանությամբ, որի հարավային կողմում կա երկշարկանի խորան: Ստորին խորանի ծածկը հարթ է, արևելյան պատի մեջ արսիդի փոխարեն ունի փոքր խորշ: Վերի հարկի խորանը համեմատաբար խորն է, ծածկը թաղակապ է, արևելյան կողմում ունի կիսակլոր արսիդ՝ ցածրիկ բեմով ու պատի մեջ ագուցված փոքրիկ վեմբարով: Երկու հարկի խորանների մուտքերն ել արևմտյան կողմից են. և բացվում են գրատան մեջ:

Գրատան առաստաղը պատած է արևի, լուսնի և հնգամեռ աստղերի զարդաբանդակներով՝ ներկված կարմիր ու սպիտակ գույնի ներկերով: Արևելյան արսիդի թաղի վրա քանդակված են երկու հրեշտակների պատկերներ՝ մարդու և արծվի կերպարանքով: Այդ նույն արսիդի պատերը ներսից ծեփված են և պատած որմանկարներով, սակայն սպիտակացներու հետևանքով վերջիններս հաղիկ են նկատվում: Ներսում, հարավային պատի մեջ, կան մի քանի մեծ խորշեր, դարակների ձևով՝ մատյաններ պահելու համար:

Միակ մուտքը արևմտյան կողմից է, որի առջև 1890 թվականին կրիմյան Հայրիկի կողմից կառուցված է հատուկ պորտիկ: Արևմտյան պատի մեջ, արտաքուստ ագուցված են գեղաքանդակ խաչքարեր՝ տապանագրություններով: Շարված է գլխավորապես սև տուֆի սրբատաշ քարերով: Կրաշաղախով մածուցված: Սալահատակված է տանիքը պատած է սալաբարերով: Վերանորոգվել է 1669 թվականին, ինչպես երևում է երդիկի հիմքին փորագրված արձանագրությունից (արձանագրություն ԺԹ):

5. Երկու մահարձաններ.— Գտնվում են Ս. Սիոն եկեղեցու հյուսիսային կողմում՝ արևելյան պատի ուղղությամբ: Հյուսիսային կողմի մահարձանը, համաձայն նրա վրա փորագրված արձանագրության (արձանագրություն ի), կառուցել է թաղեռս քանան իր ծնողների գերեզմանի վրա 1309 թվականին:

Սև տուֆի մաքուր տաշված քարերով կառուցված եռակարգ, բարձր պատվանդան ունեցող մի մահարձան է, որի միջին կարգի արևմտյան կողմը պատած է վարդածեղարդարանիներով՝ գծավոր քառակուսիների մեջ առնվազաւության կողմից գոգավոր, ուր դրված է շքեղ քանդակներով զարդարված մի մեծ խաչքար՝ կարմրագույն ներկով ներկած: Խաչքարի շաղաքարը եղանակը և գաղաթի մասը վերանորոգման հիմեւանքով ձևափոխված է:

Հարավային կողմի մահարձանը, գրավոր հիշատակություններ շունչնալու պատճառով, հայտնի չէ, թե երբ և ո՞վ է կառուցել: Նրա մշակման ձևերը ավելի բնորոշ են ԺԹ դառնի: Այդ մահարձանը նույնպես բաղկացած է պատվանդանից և կոթողի մասից, որը մի խաչքար է: Պատվանդանի մասը եռակարգ է, բարձր: Վերի մասը ամրողական մի քառից է, որի վրա ամրացված է գնդաքանդակ խաչքարը՝ արևմտյան կողմի երեսը կարմիր գույնի ներկով ներկված:

6. Վանենի պարիսպը: — Սաղմոսվանքը արևմտյան կողմից պաշտպանված է Քասախի ձորի անմատչիլի քարավաներով, իսկ մյուս երեք կողմերից շրջապատված է պարսպապտերով, իսկ մածական մեծ որձաքարերով՝ ցեխով մածուցված: պահպանվել է միայն արևմտյան մասը:

7. Վանենի միարանության բնակելի շենքերը: — Գտնվելիս են եղել պարսպի ներսում, վանքի արևմտյան կողմում: Հիմնովին ավերակ վիճակում են, նկատվում են միայն հիմնապատերի հետքերը:

8. Փաքը գերեզմանացը: — Գտնվում է վանքի հյուսիսային կողմում, պարսպից դուրս: Գերեզմանոցում նկատվում են 24 գերեզմաններ՝ հարթ երես ունեցող մեծ տապանաքարերով, երեք շարքով, իրար կից: Բոլոր տապանաքարերն ել սև տուֆից են և, համարաբ, վերաբերեն ժԹ-ԺԴ դարերին:

Այդ գերեզմանոցում պահպանվել է նաև մի մեծ մահարձան, բաղկացած պատվանդանից ու նրա վրա երկու խաչքարերոց: Պատվանդանը երկկարգ է, ստորինը ցածրագիր, վերինը բարձր՝ կարնիզավոր, ուղիղ քառանկյունի նստվածքով: Վերջինիս վրա դրված են երկու մեծ քարեր, որոնց վրա ամրացված են խաչքարերը: Հարավային կողմի խաչքարն ընկած և անհայտացած է, իսկ հյուսիսային կողմի խաչքարը բարձր է, շքեղ քանդակապարդված, արևմտյան երեսը կարմիր գույնի ներկով ներկված: Մահարձանի վրա փորագրված տապանագրություններից իմացվում է, որ մահարձանը

պատկանում է Հակոբ բարոնապետին և  
Վարդանին և կրում է 1421 թվականը (ար-  
ձանագրույթուններ իԱ, իԲ): Ակներև է, որ  
այդ Հակոբ բարոնապետը թովմա Մհեռ-  
փեցու կողմից հիշատակված Սաղմոսավան-  
քի առաջնորդ Հակոբ վարդապետը պետք է  
լինի, որը շուրջ 20 տարի աշակերտել է Հով-  
հան Որոտնեցուն:

Հան Որոտնեցուու:— 9. Մյաս գերեզմանոցը. — Գտնվում է վանքից. մոտ 200 մետր դեպի Հյուսիս: Բավական ընդարձակ գերեզմանատուն է. տապահաբարերը սև տուփից ու կապտագույն բազալտից են: Բազալտից պատրաստված տապահաբարերը բնական սալերի ձևով են, որոնք թաղված են գետնի մեջ: Տուփից պատրաստված տապահաբարերը՝ նախ շատ են ու մեծ և մշակված են հարթ երեսով, ուղղանկյուն ձևով: Գերեզմանոցում կան հինգ մեծ մահարձաններ և խաչքարերի բազմաթիվ պատվանդաններ:

Առաջին մահարձանը.—Գտնվում է գերեզմանոցի արևմտյան հերթին, մյուս մահարձաններից դեպի արևմուտք՝ առանձնակիր Մահարձանի վրա փորոգրված արձանագրության համաձայն (արձանագրությունն ԻՊ), այն կառուցել է Դանիիլ քահանան իր ծնողների գերեզմանի վրա 1255 թվականին։ Պատվանդանի մասը ուղղի քառանկյունի հատվածով է, քիչ երկարածիք՝ հարավից հյուսիսին. առջևի մասը փոս ընկած ձևով է՝ պատած շախմատի տախտակի ձև ունեցող քանդակներով։ Կոթողի առջևի մասը նույնպես խորշածել է, ուր ագուցված է գեղաքանդակի մի խաչքարով՝ երեսի մասը կարմիր պուրակ ներկված։

Գ. ԸՆԹԵՐՑՎԱՇ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սաղմոսավանքն ունի մեծ թիվ կազմող  
վիճապիր արձանագրություններ, ատկալն  
նրանց որոշ մասը, մանավանդ գավթի  
հյուսիսային պատի ներսի երեսի վրա ե-  
ղածները հողմահարված և անընթեռնելի են;  
Մեջ ենք բերում ընթեռնելի արձանագրու-  
թյուններո՛ վերծանված ձևով:

## Ա. Սինե եկեղեցի

ա. Մուտքի նակատակալ քարի վրա,  
արտաքուստ.

## 1. Εργα Πυγιά

կով։ Գրավոր հիշատակություններ չունի, ուստի նրա կառուցման ճիշտ ժամանակը և կառուցղները անհայտ են։ Կառուցման ձեզ բնորոշ է ԺՓ դարին։

**Եցրոյ մահարձակը.**— Գտնվում է նախորդների հարավային կողմում: Իր կառուցման ձևով նման է նախորդ մահարձաններին, միայն այստեղ գրված են երկու խաչքարեր: Պատվանդանի երեսի կողմի փոսացված մասը պատած է զլանածե բներ ունեցող որմասյուներով, որոնք միացած են որմակամարներով: Խաչքարի երեսի կողմը ներկված է կարմրագույն ներկով: Այդ մահարձանը նույնպես գրավոր հիշատակություններ չունի: Քանզված են գաղաթի մասը, պատվանդանի հյուսիսային մասը և խաչքարերի եղբերը:

Պարգար մահարձակը. — Գտնվում է առաջին մահարձանից դեպի արևելք, իսկ մյուսներից դեպի հարավ-արևելք: Իր կառուցման ձևով նման է նախորդներին՝ երրորդ մահարձանի մեծությամբ: Պատվանդանը երեսի կողմից զարդարված է երկրաշափական ձևերի քանդակներով: Խաչքարը եղբարձում է նույն երկրաշափական ձևերի զարդարանդանին ներկայացնելով: Կամաց պահանջանելի է այս մահարձանը ուշադիր գրավող հիշատակություն չունի:

Հինգերորդ մահարձակը.— Գտնվում է շորորորդ մահարձանից դեպի հարավ՝ մոտիկ. պատվանդանը երկկարգ է, երկրորդ կարգը համեմատաբար բարձր է և կարնիզավոր. սրա վրա դրված է հիմնաքարը, որի վրա ամրացված է շքեղազարդ խալքարը՝ երեսի մասը կարմրագույն ներկով ներկված: Գրափոր հիշատակություն չունի:

Բոլոր մահարձաններն էլ կառուցված են  
սև տոփի մաքուր տաշված քարերով՝ կրա-  
շաղախով մածուցված և վերաբերում են  
ժԳ—ԺԴ դարերին:

0.1-0.04-0.5m-0001-L

Հ ի ճշմարիտ սիրոյն Վրիստոսի յորդութեալք

Յ եւ ի սէր արարշականն վստահացեալք  
ես Վաշէ իշխ-

#### 4 անաց իշխան, որդի Մարգարի եւ ամուսին իմ Մամախաթուն

## 5 ծանեաք զաւու

6 Սուրբ Սիոն ի փրկութիւն Հոգոց մերոց

Եւ յիշատակ ամիր սպասալար  
Դաքարէի եւ ի պահպանութիւն կենաց

որդի նորին Շահնշահի որ է

8 լույս աշաց եւ ապաւէն կենաց մերոց եւ  
ողորմութեամբ պարոնին տվ-

9 աք զգեղն Աղկունծ ի Սուրբ Սիոն Սաղ-  
մոսավանացս եւ հաստա-

10 տեցաք զաւագ բեմն ամեն շաբաթ աւր  
պատարագ Զաքարիայի որ կ-

11 ատարի անխափան մինչեւ ի հաստա-  
տութեան է սուրբ ուխտս. ետ զՏանձագ-

12 աւիթ այգին յիւր յեկեղեցիս ի նորագեղ  
քարափան եւ գետաւն

13 եւ ի նորաշենիկ զաղբոյրա տնիսն  
դոնաբացէք եկեղեցոյս:

բ. Եկեղեցու ներսում. հարավ-արևելյան  
վերի խորանի մուտքի նակատին.

1 ես Վաչէ շինեցի յեկեղ-

2 եցիս և արարի արդինս յոլո-

3 վս եւ ետու զիմ զրամագին այգին

4 Մերկելի եւ հաստատեցին :՞: խորան

5 զշաբաթ աւր պատարագ. :Ա: ինձ,

6 :Ա: Դաւթի, :Ա: Մամախաթունին:

գ. Նույնի արևմայան պատի վրա,  
մուտքի հարավային կողմում,  
արտահուստ.

1 Թվ. ԶԿ (1311). կամաւ ամենակալին  
Աստուծոյ եւ առաջ-

2 նորդութեան սուրբ ուխտիս Յակոբա րա-  
րունապետին եւ յիշխանութ-

3 եան տեղոյս ծոն Ս[ար] Ղափին ես Խաչա-  
տուր վարդապետ յիշեց-

4 ի զրան որ ասեն Երանի որ ունի զաւակ  
ի Սիոնի եւ ետու զիմ

5 Հալալ գանձագին Աստուածաշունչն ի  
սուրբ եկեղեցիս եւ սպ-

6 ասաւորքս խոստացան ի տարին :՞: աւր  
պատարագ

7 ի տաւնի Մնլնդեան եւ Յարութեան եւ Հո-

8 գոյ գալլստեան: Կատարողքն աւրհ-

9 նին յԱստուծոյ: Արդ որք զգիրքս հա-  
10 նէ յեկեղեցոյ: թէ յիշ-

11 խանաց կամ քահանայից կամ յաշխ-

12 արականաց, ծախէ կամ թէ դ-

13 նէ մասն զՅուղաին

14 եւ զԿահենին առցէ,

15 եւ երից սուրբ ժողովոցն

16 նզովեալ եղիցի:

դ. Նույն տեղ, մուտքի վերեռում.

1 Շնորհաւք բարերարին Աստուծոյ ես  
Վաչէ որդի Քրոգին, որդո Վաչէի

2 եւ Տաւրիսուշահի՝ զստեր մարցպանա  
Մալ մկոնէից զնեցի զԵրեր-

3 ունս ի մեծ պարոնէն Հաճնշահէ եւ ե-  
տու ի վանս Սաղմոսի եւ զ-

4 կէսն իմ եղբարին Հասանա, որ շէն պա-  
հէ վանիցս Համար. եւ յորժամ ե-

5 հաս ինձ փոխիլ ի կենցաղոյս տարա-  
ժամ եւ կէս աւուրց՝ յանձնեցի զհոգիս իմ եւ  
զգոյ

6 ս հաւը եւ մաւր իմոյ եւ գնեցին յնչից  
իմոց ժմի: սպիտակի զԱղկունծ յիւանէէ յոր-  
դո Շահ-

7 նշահի, որ էր սեփական տէր գաւառիս  
Ամբերդո, զոր յառաջ պապն իմ Վաշէ գնեալ  
էր ի մեծ սպար-

8 ապետէն Զաքարիէէ եւ գրեալ ի դուռն  
եկեղեցոյս զոր խափաներ էր ի շար պատահ-  
մանց եկեալ ի վերա աշխ-

9 արհիս, դարձեալ վերստին գնեցաք եւ  
գրեցաք զիմ զնած այգին յԱւշական եւ  
զտունն Տորո-

10 զոնոնց՝ ի Կարբի իւր Հայրենիքն՝ ետուն  
յիմ քնարանս եւ գրեցին զՀամբարձումն եւ  
զԳաղուտ Հ-

11 ոգոյն պատարագի զՔրիստոս յանուն  
մեր. եթէ ոք խափանէ՝ յիմոց կամ յաւտա-  
րաց, անէծս առցէ յերից սուրբ

12 ժողովոցն եւ պատասխանի տա առա-  
ջի Աստուծոյ ամէն: Կատարիչքն աւրհնին ի  
Քրիստոսէ. ամէն: Խաշիկ գրիլիլ:

ե. Նույն տեղ, մուտքի հյուսիսային  
կողմում, կից.

1 Ցիսուս Քրիստոս Տեառն Աստուծոյ մեր.  
Աղմու-

2 ավանից միաբանքո՝ Վարդան վարդա-

3 պետ Հրամանաւ եւ մեր կամակցու-

4 թեամբ եղաք սահման զայս, թէ քահանա

5 կամ գործաւոր ի տեղս վաղ-

6 անի :Ա: իւ զիշերապաշտամ

7 արնեն Կատարիչքն աւրհնին

8 յԱստուծոյ: Թեղէոս յիշեցէք

9 թվիս ԶԿ: (1311):

զ. Հյուսիս-արևմայան ստորին  
խորանի հարավային պատի արտաքին  
երեսի վրա

1 ես Սիմեոն երեց եւ ամուսին իմ միա-

2 անեցաք Սաղմոսավանաց եւ բնակիչ սո-

րա հաստա-

3 տեցին ի տարին :՞: աւր պատարագ ի  
տաւնի Պետրոսի եւ Պաւ-

4 զոսի :Ա: ինձ :Ա: Զառնիզուկ. ով խա-  
փանէ մեր

5 մեղացս տէր է:

է. Հարավ-արևմայան ստորին  
խորանի հյուսիսային պատի վրա.

1 ես Խողպասար եւ ամուսին իմ միա-

2 նորդք վանիցս Հաստատեցին ի տարոցն

զնաշի երկուշաբաթն :՞: աւր

3 ժամ ինձ :՞: Կիմայթին:

բ. Նույն տեղ, ճախորդին  
շարունակարար.

1 Ես Վահարամ միաբանեցալ եկեղեցոյս  
2 եւ ետուն :Բ: Ժամ՝ զ.Ա: ինձ, :Ա: Քայի-  
կանն՝ ի նոյն աւր հաշին:

բ. Նույն տեղ, ճախորդին  
շարունակարար

1 Ես Ըռաստ միաբանեցա Եկեղեցոյս ու  
հտուն ի նույն աւր  
2 :Բ: պատարագ՝ որ կատարի անխափան:

ծ. Նույն տեղ, ճախորդին  
շարունակարար

1 Ես Միսիթար Գիտանց ետու յեկեղեցիս  
աւգնութիւն եւ սպասաւորք  
2 սորա սահմանեցին :Բ: աւր պատարագ  
ի տարին՝ Զատիկին մեսելոց աւրն՝ :Ա:  
3 ինձ եւ :Ա: Սարգսի, որ կատարեն  
աւրհնին յԱստուծոյ, որ ոչ կատարեն նզովս  
առցին Աստուծոյ:

Ժա. Եկեղեցու հյուսիսային պատին,  
ներքոս՝ լուսամուտից ներքեւ.

1 Կաման Աստուծոյ և Հայրապետու  
կուսակրա-

2 մ քահանա, ետու ի հալալ ընչից իմոց  
ի

3 սուրբ հեկեղեցիս եւ հայր Գանիէլ եւ այլ  
միար-

4 անքս խոստացան ինձ :Բ: աւր պա-  
տարագ ի տաւ-

5 նի Սրբոց Քառասնիցն: Կատարիլք  
դրոյ:

6 աւրհնին յԱստուծոյ, եւ որ խափանէ իմ  
մեղացն տէր է:

Ժբ. Հարավային պատին, հարավ-  
արևելյան ստորին խորանի մուտքին  
մոտիկ.

1 Անուամբն Աստուծոյ և Սիմեոնի մայրս  
միար-

2 անեցա Սաղմոսավանից Սուրբ Սիոնի-  
3 ս. տուի ինչս, եւ սորա սահմանեցին ի տ-

4 արին.....:

Ժգ. Նույն տեղ, ճախորդից վերև.

1 Շնորհիւն Տեան և Պիլան Միս-

2 թար Ուշեցի միաբանեցա սրբոց-

3 ս, ետու զիմ հալալ արդիւնքն

4 յեկեղեցիս եւ սորա սահման-

5 եցին ի տարոջն :Բ: աւր պատարագ

6 ի տանի Սառզարդարին՝ :Ա: ին-

7 ձ եւ :Ա: իմ քենու կատարիլք հ-

8 րամանիս աւրհնին ի Քրիստոսէ:

Ժդ. Նույն տեղ, ճախորդի  
տրեմտյան կողմում.

1 Կաման Աստուծոյ ևս Գրիգոր անպի-  
տան ծառա Քրիստոսի ետու սակաւ

2 ընծայս՝ յառաջնորդութեան Գրիգոր  
վարդապետի եւ հաւր Դան-

3 իէլի, եւ այլ եղբարութիւնքս ետուն  
ինձ :Բ: պատարագ ի տա

4 մի Սուրբ Գրիգորի աղուհացիցն՝ :Ա:  
ինձ, :Ա: իմ եղբար Բարսեղ-

5 ին: Կատարիլքն աւրհնին յԱստուծոյ, եւ  
որ խափանի մեր մեղացս տէր է:

Ժե. Նույն տեղ, ճախորդից  
ներքեւ, շարունակարար.

1 Անուամբն Աստուծոյ ևս՝ Սիսակինդս  
միաբանեցա սուրբ ուխտիս եւ

2 յիմ հալալ արդեանց ընծա բերի եկե-  
ղեցոյս: Վարդապետս եւ միաբա-

3 նքս խոստացան եւ ետուն ինձ :Ա: պա-  
տարագ Հոգոյն Գալլստեանն շարա-

4 թն աւրն: Կատարիլքն աւրհնին յԱստու-  
ծոյ: Եւ որ խափանէ նզովս առցէ:

Ժգ. Գրավիք. — Հարավարեւելյան  
սյան խոյակի արեմտյան կողի  
վրա՝ ներկազիր.

... իմ հոգու պաշարն յեկեղեցիս  
եւ սորա ետուն ինձ :Բ: աւր պատ-  
արագ ի տանի Աւետեաց Աստուծ-  
ածնի: Ով խափանէ դատի:

Ժէ. Ս. Աստվածածին եկեղեցի. —  
Մրանի հյուսիսային պատին.

1 Շնորհաւք ամենակալ-

2 ին Աստուծոյ ևս՝ Սասնէս եւ ճղ-

3 բարք իմ Վաշէ եւ Գրիգ-

4 որ միաբանեցաք սուրբ ոււ-

5 խտիս Սաղմոսավանից եւ

6 տուաք ի մեր հայրենի գե-

7 զէս Աղքնագեղո հանդէ-

8 ն զնոտկի տափն որը-

9 աքչուրին դուս գա :Ա:

10 գութանի հող ճաղագ-

11 ովն զրովի, եւ սորա խոս-

12 տացան տարին :Գ: պատար-

13 ագ. Համբարձման: Եթէ ոք

14 յաւագաց հակառակ..:

Ժը. Գրատուն. — Հարավային  
պատի վրա, ներսից.

1 ի թվ. ԶԴ (1255): Ես Քուրդս եւ ամուսին  
իմ Խորիշահ շինեց-

2 ար զգրատունս եւ հաստատեցաք զմա-  
տուու յան-

3 ուն դստեր մերո Մամախաթունին որ  
տարածամ փոխեցաւ

4 ի Քրիստոս: Եւ մեր զարդինքն, որ  
արարիք՝ խաչ ոսկի եւ Աւետարան

5 ոսկետութ, է նափորտ եւ վառ, է զարդք  
և կեղեցո, եւ սահմ-

6 անեցաք զՅայտնութիւն եւ զջատիկն  
ճրագալու-

7 յովն զԱստուածածինն եւ զՍուրբ Խաչն  
նաւակատովն յա-

8 յամ խորանի պատարագի զՔրիստոս  
յանուն Մամախաթունին:

9 Կատարիչ զբոյս աւրծնին յԱստուծոյ:  
Ով խափանէ դատի Տեառնէ, ամէն:

Ժբ. Գրատան տանիքի կենարոնի  
լուսանցքի հիմքին, ներսից.

1 Թվ. ՌՃՁԲ (1669). նորոգեցաւ Սուրբ  
Աստուածածինս... Հոգաբարձութեամբ Գար-  
րիէլ վարդապետի, աւժանդակութեամբ...<sup>24</sup>:

ի. Ս. Սիռն եկեղեցու հյուասային  
կողմում գտնվոյ մահարձանի վրա.

1 Քրիստոսի յուսովն հս Թաղէոս քահանա  
կան-

2 կնեցի զիաշ ի փրկութիւն հոգո իմո

<sup>24</sup> Այս արձանագրությունը խիստ եղծված լինելու  
պատճառով, մեջ ենք բերում Հովհաննես հափսողու  
Շանխարունյանից, «Մատրագրութիւն...», թ., էշ-  
միածին, 1842 թ., էջ 124:

3 եւ ծնողաց իմոց որ կան առ ոտս սորատ:

4 Որք երկրպագէք, լիշեցէք ի Քրիստոս  
զՊէ-

5 արոս, զՊարսամ, զՄիուկս: ի թվ. ԶԾՀ  
(1309):

իա. Վանքի պարսպի հյուախային  
պատից դուրս եղած մահարձանի վրա.

1 Սուրբ նշան տէրունական Յակոբ

2 բարունապէտին լեր քաւարան: Թվ.  
ՊՀ (1421):

իբ. Նույն մահարձանի վրա.

Որք երկրպագէք սրբոյ նշանիս զմեղու-  
ցեալ Վարդանս յաղաւիս լիշեցէք:

իգ. Վանքից դեպի հյուսիս զտնվոյ  
մեծ գերեզմանատան մի մահարձանի  
վրա.

1 ես Դանիէլ քահանա կանկնեցի զ-

2 խաչս ի փրկութիւն Հոգո իմո իւ ծնողաց

3 իմոց եւ աղղականաց որ անկեալ կան  
առ ոտս

4 սորա, ակն ունելով գալրստեան սո-  
րա: Որք

5 երկրպագէք՝ լիշեցիք զմեկ եւ զՀոգ-

6 եւոր պատանեկն իմ զԳրիգոր, լիշեաչիք

7 ի Քրիստոս: եւ էր թու: ԶՊ (1255):

